

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

- ՀՈՒՇԻ ՍԱՐԳ. ՄԱՆ.-ԻՆ.—Լ. Անդրեևի «մառախուղի մէջ» վէպի թարգմանութիւնը ստացանք. այս համարում անհնար եղաւ տպել. կտպենք միւս համարից:
- ՄՈՍԿՈՒԱ. Ս. Տ.-Ս.—Բուրձի Լինդաուի «Մի դժբախտ ազգ (Ein unglückliches Volk) վէպի հայ թարգմանութիւնը սիրով կտպենք «Լուսնայում» հետեւեալ համարից սկսած. Այս համարի տպագրութիւնն արդէն աւարտած է:
- Ս. Պ. ԲՈՒՐԳ. ՍՏ. ԳԱՐԲ.—«Լուսնայի» № 3 ուղարկեցինք Ձեր մշտական հոգեով, բայց այս օրերս յետ ստացանք. հաղորդեցէք մեզ Ձեր նոր հասցէն:
- ՆԻԿՈԼԱՅԻՉ. (Մօրապիս-Աւստրիա) ԲԱԼ. ԼՈՒԻ ԿՈՒՒԴԷԼ-ԿԱՅԻՆ.—Ուղարկեցինք Ձեզ №№ 1—3, Կկատարենք Ձեր խնդիրները:
- ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ԵՐԿՐԱԾ Ուղարկողներին խնդրում ենք գրել պարզ և մի երեսի վրայ. Հաս անգամ վատ գրած լինելուց անխորժ սխալներ են մտնում տպագրութեան ժամանակ:
- ԱԼԷԲՍԱՆԴՐԱՅՈՒ. Ք. ԱՀՈՏ.—«Հինգ րոպէ ևս չի տպագրուի:
- Ն. ՆԱԻԻՋԵՒԱՆ. Գամառ Բաթիպայի «Հայ երիտասարդ» բանաստեղծութեան մի օրինակը խմբագրութիւնս այս օրերս ստացաւ. տպագրելու իւր մի այլ աշխատակցից և կըտրուենք միւս համարում:
- ՄՈՍԿՈՒԱ. Ա. Կ.—«Արտաւազը» բանաստեղծութիւնը և Ձեխովի «խնդիրը» ուշ ստացանք. այս համարում այլ ևս տեղ չկար. Արտաւազը կտպուի հետեւեալ համարում, իսկ միւսը հերթին պիտի տպասէ:

---

Բօստօնից ուղարկուած է մեզ «Boston Post» լրագրի յուլիսի 14-ի (ն. տ.) համարը, որի մէջ տպագրուած է մեր աշխատակից բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանի մի բանաստեղծութեան աճալիերէն թարգմանութիւնը «Armenian Song» վերնագրով, յայտնի օր. Ալիս Բլէկվելի (Blackwell) թարգմանութեամբ:

---

Խմբագիր Հրատարակիչ ԳԻՒՏ Ա. ԲԱԼ. ԱՂԱՆԵԱՆՑ

---